ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

Visegrad Fund

Ministry of Foreign Affairs
Republic of Korea

Արմեն Գրիգորյան

Armen Grigoryan

Կիբեռանվտանգության ոլորտում Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականության որոշ առանձնահատկություններ

Some characteristics of the Visegrad Four states' cybersecurity policies

Ծրագիրն իրականացվել է գործընկերների մասնակցությամբ.

«Res Publica» հիմնադրամ (Լեհաստան)
Բուդապեշտի հանրային քաղաքականության վերլուծությունների ինստիտուտ (Հունգարիա)
Քաղաքականության և հասարակության ինստիտուտ (Չեխիա)
«Ռազմավարական վերլուծություն» կենտրոն (Սլովակիա)

The project was implemented in cooperation with

Institute for Politics and Society (Czech Republic)
Budapest Institute for Policy Analysis (Hungary)
Res Publica Foundation (Poland)
Strategic Analysis Think Tank (Slovakia)

Սույն հրապարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի և Կորեայի Հանրապետության ԱԳՆ-ի օժանդակությամբ իրականացված «Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում խորացված բարեփոխումների համար» ծրագրի շրջանակում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Լեհաստանի, Հունգարիայի, Չեխիայի և Սլովակիայի կառավարությունների կողմից՝ Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի միջոցով, որի նպատակը Կենտրոնական Եվրոպայում հարատև տարածաշրջանային համագործակցության առաջխաղացումն է:

This paper is published within the framework of the *Further Support for Reforms in Armenia with Visegrad Four's Know-how* project funded by the International Visegrad Fund and the Ministry of Foreign Affairs of the Republic of Korea.

The project is co-financed by the Governments of Czechia, Hungary, Poland and Slovakia through Visegrad Grants from International Visegrad Fund. The mission of the fund is to advance ideas for sustainable regional cooperation in Central Europe.

Grant #22220233

Լրացուցիչ մանրամասներ առկա են https://centreforpolicystudies.org/pr6.html էջում
Additional information: https://centreforpolicystudies.org/en-pr6.html

Հոդվածաշարի խմբագիր՝ **Արմեն Գրիգորյան**
Series editor: **Armen Grigoryan**

Երևան 2023
Yerevan, 2023

Արմեն Գրիգորյան

Կիբերանվտանգության ոլորտում Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականության որոշ առանձնահատկություններ

«Կիբերանվտանգություն» եզրույթն առնչվում է ժամանակակից տեխնոլոգիաների հետ կապակցված գրեթե բոլոր երևույթներին: Ներկայիս թվային ժամանակաշրջանում մեր կյանքը բազմաթիվ առումներով սերտորեն կապված է համացանցի, համակարգիչների, այլ սարքավորումների և համակարգչային ծրագրերի հետ: Կենսական նշանակության բոլոր ենթակառուցվածքները՝ բանկային համակարգը, էլեկտրական ցանցերը, առողջապահությունը, օդային հաղորդակցությունը և այլն, ինչպես նաև պետական հիմնարկները, արտադրական ձեռնարկությունների բնականոն աշխատանքը կապված է համացանցի հետ: Անհատները նույնպես զգալիորեն կախված են մշտապես համացանցին միացրած սարքավորումներից՝ կատարելով գնումներ, օգտվելով սոցիալական ցանցերից, առցանց քարտեզներից, խաղերից և բազմաթիվ այլ ծառայություններից:

Տեխնոլոգիաները գնալով ավելի ու ավելի են զարգանում. նույնը տեղի է ունենում կիբերհարձակումների հետ: Համընդհանուր փոխկապակցվածությունը և տվյալների առցանց շտեմարանների օգտագործումը հանգեցնում են թե՛ անմիջական, թե՛ երկրորդական ռիսկերի ավելացմանը: Համակարգերի փոխկապակցվածությունը և տեխնիկական բարդությունը, որին է՛լ ավելի են նպաստելու նորաստեղծ տեխնոլոգիաները՝ 5G ցանցերը, արհեստական բանականությունը, քվանտային տեխնոլոգիաները և այլն, հետագայում կարող են հանգեցնել առավել մեծ փոխկապակցված վտանգների: Որոշ համակարգերի սեփականատերեր նույնպես կարող են նպաստել տվյալների անվտանգության և կենսական ենթակառուցվածքների համար առկա սպառնալիքներին:

Տարբեր տեսակի տվյալներ՝ անձնական տվյալները, մտավոր սեփականությունը, ֆինանսական տվյալները և այլն, կարող են վտանգվել դրանց արտահոսքի և ապօրինի օգտագործման պատճառով՝ ինչը հղի է զանազան բացասական հետևանքներով: Հանցագործները, թշնամական պետությունները և պարզապես տարատեսակ անբարեխիղճ օգտատերեր կարող են ձեռք բերված տվյալներն օգտագործել նյութական շահ հետապնդելու, դրամաշորթության, քաղաքական նպատակներ իրականացնելու և այլ նպատակներով. այդպիսով, տվյալների արտահոսքը հղի է լուրջ վտանգներով՝ անձնական կյանքի, տնտեսության և ազգային անվտանգության համար: Հետևաբար, կիբերանվտանգությունը հատկապես կարևոր է բոլոր տեսակի տվյալները պահպանելու համար՝ ցանցերը և սարքավորումները արտաքին միջամտությունից պաշտպանող սարքերի և գործիքակազմի միջոցով: Այն կարող է օգնել տվյալների արտահոսքերը, ինքնության յուրացումը և այլ կիբերհանցագործությունները կանխելուն:

Կիբերանվտանգությունը կարող է բաժանվել մի քանի ենթատիրույթների.

- Ցանցային անվտանգությունը ներառում է համակարգչային ցանցերի պաշտպանությունը ապօրինի ներխուժումներից, խափանումներից և ոչ նպատակային օգտագործումից՝ սարքավորումների և ծրագրային ապահովման միջոցով,
- Ծրագրային անվտանգությունը կապված է ծրագրերի և սարքավորումների պաշտպանության հետ: Այն հնարավոր է դառնում ծրագրերի թարմացման միջոցով՝ առավել ապահովության համար: Անվտանգությունը պետք է

ապահովվի նաև ծրագրային ապահովման ստեղծման բոլոր փուլերում՝ ծրագրային կոդը գրելու, վավերացման, սպառնալիքների մոդելավորման և այլն,

- Տեղեկատվական կամ տվյալների անվտանգությունը կապված է տվյալների կրիչների և փոխանցման ուղիների պաշտպանության հետ՝ գաղտնիության պահպանման համար,
- Ինքնությունների կառավարումը անհատների և այլ օգտատերերի համար թույլատրելի հասանելիության մակարդակի որոշումն է,
- Գործառնական անվտանգությունը տվյալների ռեսուրսները կառավարելու և դրանց անվտանգությունն ապահովելու մասին որոշումների կայացման գործընթացն է,
- Շարժական սարքերի անվտանգությունը կապված է բջջային հեռախոսներում, շարժական համակարգիչներում, պլանշետներում և այլ սարքերում պահվող անձնական և այլ տվյալների պաշտպանության հետ՝ դրանք ապօրինի օգտագործումից, սարքերի կորստից կամ գողությունից, համակարգչային վիրուսներից և այլ վտանգներից ապահովելու համար,
- Առցանց շտեմարանների անվտանգությունը դրանցում պահպանվող տվյալների պաշտպանությունն է,
- Վթարների վերացումը և շարունակականության պլանավորումը տվյալների կորստով կամ աշխատանքի խափանմամբ հղի ապօրինի միջամտություններին հակազդելու գործիքակազմն է՝ մշտադիտարկումը, կանխազգուշացման համակարգը, գործողությունների պլանները:[1]

Կիբերանվտանգության համար առանցքային նշանակություն ունի նաև օգտատերերի ուսուցումը: Սպառնալիքների մասին տեղեկացվածությունը, անվտանգության միջոցների մասին տեղեկացվածությունը, կարգադրությունների և պահանջների կատարումը կարող են նվազեցնել կիբերհանցագործությունների զոհ դառնալու վտանգը՝ թե անհատների, թե կազմակերպությունների համար:

2020 թ. ընդունված ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը ներառում է «Բաց և անվտանգ տեղեկատվական և կիբերտիրույթների ապահովում» հակիրճ ենթագլուխը, որում մասնավորապես նշված է.

> «Հայաստանի տեղեկատվական անվտանգությանը սպառնում են օտարերկրյա պետությունների, միջազգային ահաբեկչական կազմակերպությունների, հանցավոր խմբավորումների և անհատների կողմից Հայաստանի տարածքում գտնվող տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ կիբերհարձակումները: ... Ժամանակակից աշխարհում ավելի սուր դրսևորումներ են ստանում տեղեկատվական պատերազմները, որոնք ներառում են քարոզչության, մանիպուլյացիաների, կեղծ լուրերի և ապատեղեկատվության գործիքակազմ և հաճախ թիրախավորում են ժողովրդավարական արժեքները: Այս համատեքստում մենք աշխատելու ենք հանրային իրազեկվածության և մեդիագրագիտության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով հզորացնել տեղեկատվական պատերազմներին հակազդելու հասարակության և պետության կարողությունները: ... Առաջնային մարտահրավերներից է տեղեկատվական և կիբերանվտանգության ոլորտը կարգավորող

[1] 'What is Cyber Security?' https://www.javatpoint.com/what-is-cyber-security.

> համապարփակ պետական քաղաքականության անկատարությունը, կենսական նշանակության տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանությունն ապահովող օրենսդրության բացակայությունը, համակարգչային պատահարների արձագանքման կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների ոչ բավարար մակարդակը և կիբերանվտանգության ոլորտը համակարգող կառույցի բացակայությունը: ... Տեղեկատվական տիրույթում դիմակայունությունը բարձրացնելու համար մենք զարգացնելու ենք ազգային տեղեկատվական և կիբեր կարողությունները՝ ռիսկերի արդյունավետ կառավարման, որակավորված մասնագիտական ներուժի ձևավորման, միջազգային ստանդարտների տեղայնացված ներդրման, թվային գրագիտության մակարդակի բարձրացման միջոցով»:[2]

Ռազմավարությունում կիրառվող ձևակերպումների առումով առկա է առաջընթաց՝ 2007 թ. ընդունված նախորդ ռազմավարության համեմատ: Այնուամենայնիվ, գործնական առաջընթացն առայժմ սահմանափակ է: Թվային և տեղեկատվական անվտանգության համապարփակ ռազմավարություն դեռևս առկա չէ. դա մասնավորապես նկատելի է կիբերհարձակումների ժամանակ:

Միևնույն ժամանակ, ոլորտի համար պատասխանատու կառավարական մարմինները պատրաստ են համագործակցելու հնարավոր գործընկերների հետ: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, բացի օրենսդրության և քաղաքականության իրականացման բարելավման նպատակով օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության հնարավորությունները քննարկելու պատրաստակամությունից, նաև օժանդակում է օգտատերերի ուսուցմանը: Այսպես՝ վերջերս Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության հետ համագործակցությամբ կազմակերպվել էր դասընթաց, որի արժեքի 30-80% մասնակիցների համար սուբսիդավորվել էր կառավարության կողմից:[3]

Սույն հոդվածում ամփոփված են Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Միջազգային վիշեգրադյան հիմնադրամի և Կորեայի Հանրապետության ԱԳՆ-ի օժանդակությամբ իրականացված ծրագրի որոշ արդյունքներ: Մասնավորապես, հոդվածը կենտրոնանում է ծրագրին մասնակցած փորձագետների պրեզենտացիաների որոշ հատվածների վրա՝ նաև ներկայացնելով լրացուցիչ տեղեկություններ, որոնք կարող են նպաստել Հայաստանի կիբերանվտանգության քաղաքականության մշակումն ու իրականացումը բարելավելուն:

Ազգային անվտանգության ռազմավարությունների և քաղաքականությունների համեմատություն

Վիշեգրադյան քառյակի երկրների ազգային անվտանգության ռազմավարությունների և դրանցից բխող քաղաքականությունների միջև նշանակալի նմանություններ կան՝ ինչը պայմանավորված է նրանց ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի անդամի կարգավիճակով. քաղաքականության առանցքային տարրերի

[2] ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, էջ 30-31, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf
[3] https://edu.hti.am/trainings/cybersecurity

համապատասխանեցումը ՆԱՏՕ-ի, ԵՄ-ի և դաշնակից պետությունների նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասն է:

2018 թ. Եվրոպական խորհրդարանը, ԵՄ Խորհուրդը և Եվրոպական հանձնաժողովը հասել են կիբերանվտանգության մասին օրենքի վերաբերյալ քաղաքական համաձայնության՝ վերահաստատելով ԵՄ-ի Կիբերանվտանգության գործակալության լիազորությունները՝ կիբերանվտանգության սպառնալիքներին և կիբերհարձակումներին առավել արդյունավետորեն դիմակայելու նպատակով անդամ պետություններին օգնելու համար: Օրենքով սահմանվել է կիբերանվտանգության ոլորտում սերտիֆիկացման ընդհանուր ընթացակարգը՝ ներառյալ առցանց ծառայությունների և օգտատերերի կողմից կիրառվող սարքերի անվտանգության ապահովումը: Հատկանշական է սակայն, որ վերջինիս առումով նշվել է. «Քանի դեռ ԵՄ-ի քաղաքացիների առօրյա կյանքի բոլոր ասպարեզներում առկա են օտարերկրյա արտադրության սարքեր և ծրագրային ապահովում, անվտանգությունը կմնա անհասանելի երազանք»:[4]

Չնայած ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի անդամներին հասանելի ընդլայնված հնարավորություններին, կիբերանվտանգության ոլորտում Վիշեգրադյան քառյակի երկրները մեծապես դիմակայում են նույն մարտահրավերներին՝ ինչպես Հայաստանը: Դրանով է պայմանավորված որոշ ձևակերպումների համընկնումը և որոշ լուծումների նմանությունները՝ գոնե տեսականորեն: Միևնույն ժամանակ, արժե ուշադրություն դարձնել հատկապես քաղաքականության որոշ նորագույն ասպեկտների, ինչպես նաև որոշ պետական մարմինների կառուցվածքին՝ որպես դրական օրինակներ:

Չեխիա

Համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմը (CERT) գործում է 2011-ից որպես CSIRT.CZ (CSIRT՝ Cyber Security Incident Response Team, Կիբերանվտանգության միջադեպերի արձագանքման թիմ). Դրա իրավասությունները սահմանվում են 2014 թ. թիվ 181/2014 օրենքով (կիբերանվտանգության մասին օրենք) և Կիբեր և տեղեկատվական անվտանգության ազգային գործակալության (NÚKIB) հետ կնքված պայմանագրով: NÚKIB-ը կիբերանվտանգության ոլորտի կենտրոնական վարչական մարմինն է, որը պատասխանատու է տեղեկատվական և հաղորդակցության համակարգերում տեղեկատվության գաղտնիության, կրիպտոգրաֆիայի, ինչպես նաև «Գալիլեո» արբանյակային համակարգի հետ փոխկապակցված ոչ հանրային բնույթի ծառայությունների համար:[5] Այն նաև իր կայքի միջոցով պարբերաբար հրապարակում է նախազգուշացումներ առկա վտանգների մասին և խորհրդատվություն է տրամադրում:

2015 թ. ընդունված Չեխիայի Հանրապետության անվտանգության ռազմավարությունը սահմանում է, որ հանրային և մասնավոր հատվածների դեմ ուղղված կիբերհարձակումների հայտնի ռիսկերից, առկա են լրացուցիչ ռիսկեր

[4] Botond Feledy, 'Cyber security and Sovereignty: Two levels of digital autonomy'. Think Visegrad policy brief, 2018, https://europeum.org/en/articles/detail/2454/cyber-security-and-sovereignty-two-levels-of-digital-autonomy.

[5] National Cyber Security Strategy of the Czech Republic, p. 7, available at https://nukib.cz/en/cyber-security/strategy-action-plan/.

կենսական ենթակառուցվածքների համար, և վերջիններիս պաշտպանությունը ներառում է այդ ոլորտներում և ռազմավարական ձեռնարկություններում օտարերկրյա ներդրումների մշտադիտարկումը՝ նման ներդրումներն օտար պետությունների կողմից իրենց շահերի առաջխաղացման համար օգտագործելու հնարավորությունները բացառելու համար: Դա մասնավորապես վերաբերվում է էներգետիկ և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաներին:[6]

2016-ին իրականացված ազգային անվտագության աուդիտը հիմնված էր համապարփակ ռազմավարական վերլուծության վրա՝ չեխ հասարակությանը համար սպառնալիքների և ազգային անվտանգության թույլ կողմերի գնահատմամբ: Ըստ աուդիտի բնորոշման, ազգային անվտանգության համար հիմնական սպառնալիքները բաժանվում են հինգ տեսակի՝ կիբեր լրտեսություն, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ենթակառուցվածքի խափանումը կամ դիմակայունության թուլացումը, թշնամական քարոզչությունը, հանրային ծառայությունների խափանումը կամ անվտանգության մակարդակի նվազումը, ինչպես նաև կիբեր ահաբեկչությունը:

Ըստ սպառնալիքների մակարդակի գնահատման, Չեխիայում բարձր է կիբեր լրտեսության հավանականությունը՝ գաղտնի, ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև անձնական տվյալներ ստանալու նպատակով, ու նաև բարձր է տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ենթակառուցվածքի խափանումը կամ դիմակայունության թուլացումը: Վերջինիս հետ կապված ռիսկերը և մարտահրավերները մասամբ կապված են պետական ծառայողների՝ կիբերանվտանգության ոլորտում գիտելիքների պակասի և «թվային հիգիենայի»[7] կանոններին չհետևելու հետ, ինչպես նաև որոշ նախարարությունների և այլ կառույցների կողմից ծախսերը պլանավորելիս կիբերանվտանգության տեխնոլոգիաները և այլ թվային գործիքները որպես առաջնահերթություն չդիտարկելը: Միևնույն ժամանակ, կիբեր ահաբեկչության և հանրային ծառայությունների խափանման կամ անվտանգության մակարդակի նվազման վտանգները գնահատվում են միջին մակարդակի. վերջինիս դեպքում, ռիսկի գործոններից են կիբերանվտանգության քաղաքականության վատ պլանավորումը, ինչպես նաև դարձյալ՝ պետական ծառայողների անուշադրությունը:[8]

Մեկ այլ մասնագիտացված և վերջերս վերանայված փաստաթուղթ էլ 2021-2025 թթ. Կիբերանվտանգության ազգային ռազմավարությունն է՝ հիմնված հասարակությանը սպառնացող հիմնական վտանգների և ազգային անվտանգության համակարգում թերությունների ու բացթողումների համապարփակ ռազմավարական վերլուծության վրա: Դրանում մասնավորապես նշված է տեղեկատվական հասարակության անցման հետ կապված խնդիրների առկայությունը՝ ներառյալ թվային հիգիենայի, մեդիագրագիտության և քննադատական մտածողության պակասը: Նշվում է, որ պետությունը պետք է կրթական համակարգի բոլոր մակարդակներում ներառի կիբերանվտանգությունը՝ որպես ցանկացած ոլորտի առնչվող խնդիր, հատկապես շեշտելով անվտանգության

[6] Security Strategy of the Czech Republic, https://www.army.cz/images/id_8001_9000/8503/Security_Strategy_2015.pdf, p. 20.

[7] «Թվային հիգիենան» բնութագրվում է որպես կանոնների, գործընթացների և սովորությունների համադրություն, որն օգտատերերին թույլ է տալիս անվտանգ կերպով օգտվել կիբերտիրույթից՝ դրսևորելով պրոակտիվ վերաբերմունք թվային հետքերի, անվտանգության և այլ հանգամանքների նկատմամբ:

[8] National Security Audit, https://www.mvcr.cz/chh/soubor/national-security-audit.aspx, pp. 97–104.

կարևորությունը՝ ցանկացած էլեկտրոնային սարքավորում օգտագործելիս:[9] Ռազմավարությունը փոխլրացվում է գործողությունների պլանով, որում թվարկված են կիբերանվտանգության ոլորտում անհրաժեշտ գործողությունները, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինները, ինչպես նաև իրականացման ժամկետները:[10]

Քաղաքականության և հասարակության ինստիտուտի փորձագետ Յան Հավլիչեկը, ով Հայաստան էր եկել 2022 թ. դեկտեմբերին՝ Քաղաքականության հետազոտական կենտրոնի կազմակերպած ծրագրի շրջանակում, «Առավոտ» օրաթերթի հետ հարցազրույցում մասնավորապես նշել էր, որ 2022 թ. հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Չեխիայի ԵՄ նախագահության կողմից կազմակերպվել է բարձրագույն մակարդակով համաժողով՝ կիբերանվտանգության և Եվրոպայի թվային ապագայի թեմայով, որին մասնակցեցին նաև ԱՄՆ-ի և Ավստրալիայի ներկայացուցիչները: Չեխիայի նախագահության ներքո ԵՄ անդամները նաև միասնական դիրքորոշում են համաձայնեցրել՝ Եվրոպական պառլամենտում քննարկվելիք ԵՄ կառույցներում կիբերանվտանգության բարելավման միջոցների վերաբերյալ: Նոյեմբերին ԵՄ Խորհուրդը, պառլամենտը և Եվրոպական հանձնաժողովը համաձայնեցրել են թվային տիրույթում եվրոպական արժեքները՝ մասնավորապես ժողովրդավարությունը, հավասարությունը և կայուն զարգացումը, պահպանելու և առաջ մղելու միջոցներ: Բացի այդ, Չեխիայի նախագահությունը նաև Եվրոպական պառլամենտի հետ հաջողությամբ բանակցել է արտադրանքի անվտանգության չափանիշների մասին:[11] Վերջինս ուղղակիորեն փոխկապակցված է վերը նշված՝ օտարերկրյա արտադրության սարքավորումների և ծրագրային ապահովման խնդրի հետ:

Բացի այդ, Չեխիան նաև նախապատրաստել էր Արևելյան գործընկերության երկրների դիմակայունության ուժեղացմանը նպատակաուղղված քաղաքականության առաջարկների փաթեթը, որում նշված էր նաև հիբրիդային սպառնալիքների, այդ թվում՝ կիբերհարձակումների դեմ պայքարելու համար, համագործակցության անհրաժեշտությունը: Դա մասնավորապես հիշատակվել էր այն ժամանակ Չեխիայի փոխդեսպանի պաշտոնը զբաղեցրած Յան Պլեշինգերի կողմից՝ Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Միջազգային վիշեգրադյան հիմնադրամի օժանդակությամբ իրականացված նախորդ ծրագրի շրջանակում 2020 թ. հուլիսի 13-ին կազմակերպված «Արևելյան գործընկերություն. հայացք Չեխիայից» սեմինարի բացման խոսքում:[12]

Հունգարիա

Կիբերանվտանգության ոլորտում Հունգարիայի քաղաքականությունն այս ծրագրի շրջանակում հատուկ չի ուսումնասիրվել. հունգարացի փորձագետների հետ քննարկումները կենտրոնացել են այլ թեմաների վրա: Կարելի է սակայն նկատել, որ

[9] National Cyber Security Strategy of the Czech Republic, p. 18, available at https://nukib.cz/en/cyber-security/strategy-action-plan/.
[10] Action Plan for the National Cyber Security Strategy of the Czech Republic, available at https://nukib.cz/en/cyber-security/strategy-action-plan/.
[11] Էմմա Գաբրիելյան, «Հիբրիդային սպառնալիքները՝ ուշադրության կենտրոնում», «Առավոտ», 21.12.2022, https://www.aravot.am/2022/12/21/1312592/
[12] «Չեխիան շարունակելու է Հայաստանին սատարել ԱլԳ շրջանակներում», 1in.am, 14.07.2020, https://www.1in.am/2787790.html

2020 թ. Հունգարիայի ազգային անվտանգության ռազմավարությունը դիտարկում է կիբերտիրույթը որպես առանձին ոլորտ՝ ցամաքի, ծովի, օդային տարածքի և տիեզերքի կողքին, և ապագա հակամարտությունները կիբերտիրույթ տեղափոխելու հավանականությունը շատ բարձր է գնահատվում: Քանի որ թվային գործիքները կարող են սպառնալ ֆիզիկական անվտանգությանը կամ խոշոր նյութական վնաս հասցնել, ռազմավարությամբ պետությանն իրավունք է վերապահվում կիբերհարձակումներին պատասխանել կոնվենցիոնալ միջոցներով. միաժամանակ նշվում է, որ, հաշվի առնելով մեղավորներին հայտնաբերելու բարդությունը, պատասխան գործողություններից առաջ անհրաժեշտ է իրականացնել մանրազնին հետաքննություն:[13] Ընդհանուր առմամբ, սա ենթադրում է, որ որոշ դեպքերում կիբերհարձակումները կարող են դառնալ ՆԱՏՕ-ի դաշնակիցներին կազմակերպության կանոնադրության 5-րդ հոդվածի համապատասխան դիմելու անհրաժեշտություն:

Ռազմավարությամբ նաև կարևորվում է կիբերանվտանգության ոլորտում վիճակի բարելավումը՝ հիմնվելով Հունգարիայում կատարված հետազոտությունների վրա: Հաշվի առնելով, որ հունգարական համալսարաններից մի քանիսն առաջադիմել են կիրառական մաթեմատիկայի և այլ հարակից ոլորտներում, հնարավոր է աշխատել գիտական համագործակցության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, կարելի է նման համագործակցության հնարավորությունը քննարկել դիվանագիտական հարաբերությունները վերականգնելուն զուգորդող բանակցությունների ընթացքում:

Լեհաստան

Լեհաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվել է 2020 թ.: Դրանով նախատեսվում է ուժեղացնել կիբերսպառնալիքների նկատմամբ դիմակայունությունը՝ հանրային կառավարման, ռազմական և մասնավոր ոլորտներում: Այդ նպատակով նախատեսվում է զարգացնել կարողությունները հետազոտական, փորձարկման, գնահատման և կիբերանվտանգության ծառայությունների սերտիֆիկացման ոլորտներում: Մասնավորապես, առաջարկվող միջոցներից են «ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում հետազոտությունների պետական ֆինանսավորման միջոցով կիբերանվտանգությանն առնչվող սեփական լուծումների մշակումը՝ այդ թվում մեքենայական ուսուցման, իրերի ինտերնետի (IoT), լարային և շարժական ցանցերի (5G և հաջորդ սերունդների)՝ համալսարանների, գիտական հաստատությունների, և հանրային ու մասնավոր հիմնարկների հետ համագործակցությամբ»:[14] Ռազմավարությունում նաև նշված է, որ թվային տիրույթում պետության և քաղաքացիների անվտանգ գործունեությունն ապահովելու համար պետք է զարգացնել կարողությունները՝ միավորելով երեք

[13] Hungary's National Security Strategy. A Secure Hungary in a Volatile World. https://honvedelem.hu/hirek/government-resolution-1163-2020-21st-april.html#:~:text=83)%20Hungary%20regards%20its%20primary,human%20rights%20and%20fundamental%20freedoms.

[14] National Security Strategy of the Republic of Poland, p. 20, https://www.bbn.gov.pl/ftp/dokumenty/National_Security_Strategy_of_the_Republic_of_Poland_2020.pdf

շերտեր. վիրտուալը (օպերացիոն համակարգեր և ծրագրեր), ֆիզիկականը (ենթակառուցվածքներ և սարքավորումներ) և ընկալումները:[15]

Սրա առնչությամբ ծրագրի շրջանակում 2023 թ. հունվարին «Res Publica» հիմնադրամի նախագահ, «Visegrad Insight» հանդեսի գլխավոր խմբագիր Վոյչեխ Պշիբիլսկու Երևան կատարած այցի ընթացքում տեղի ունեցած «Լեհաստանի անվտանգային քաղաքականությունը» թեմայով համաժողովում մասնավորապես նշվեց, որ ընկալումների մակարդակում կարողություններ զարգացնելն, ըստ էության, ավելի բարդ խնդիր է, քան վիրտուալ և ֆիզիկական կարողությունները, որոնց համար ուղղակի պահանջվում են տեխնիկական գիտելիքներ և սարքավորումներ: Ինչպես և վերը հիշատակված Չեխիայի դեպքում, խնդիրը կիբերանվտանգության և դրա կարևորության մասին տեղեկացվածության պակասն է:

Սլովակիա

Սլովակիայի Հանրապետության անվտանգության ռազմավարությունն ընդունվել է 2021 թ.: Այն ևս դիտարկում է կիբերտիրույթը որպես առանձին ոլորտ, որում սակայն հատկապես դժվար է պարզել հարձակվողների ինքնությունը՝ հարձակման մեթոդների և գործիքների կատարելագործման պատճառով:[16] Ռազմավարությամբ առաջնային դեր է վերապահվում համագործակցությանը՝ նաև միջազգային, այդ թվում գործընկեր պետությունների հետ երկկողմանի համագործակցությունը, ինչպես նաև դաշնակիցներից ստացված, վտանգ չներկայացնող տեխնոլոգիաների օգտագործմանը:[17]

Ծրագրի շրջանակում 2022 թ. նոյեմբերի 22-ին տեսակապի միջոցով կազմակերպվել էր քննարկում Սլովակիայի Կիբերանվտանգության ազգային կենտրոնի տնօրեն Ռաստիսլավ Յանոտայի հետ՝ «Կիբերանվտանգությունը Սլովակիայում. օրենսդրական և գործնական խնդիրներ» թեմայով, մասնավորապես ուշադրություն դարձնելով օրենսդրական և գործնական որոշ խնդիրների, այդ թվում՝ կիբերանվտանգության ոլորտում տարբեր գործառույթներ իրականացնող պետական կառույցների միջև իրավասությունների բաժանմանը:[18] Ռ. Յանոտան նաև առաջարկեց, որ կիբերանվտանգության ոլորտի համար պատասխանատու հայ պաշտոնյաների համար կազմակերպվի այց Սլովակիա՝ Սլովակիայի միջազգային զարգացման գործակալության (SlovakAid) կողմից առաջարկվող փորձի փոխանակման շրջանակում: Այս հնարավորությունը լրացուցիչ քննարկվեց նաև 2023 թ. փետրվարին հեղինակի Սլովակիա կատարած գործնական այցի ընթացքում:[19] Հայաստանում լրացուցիչ քննարկումներից հետո

[15] Ibid., p. 21.
[16] Security Strategy of the Slovak Republic, p. 12, https://www.mzv.sk/documents/30297/4638226/security-strategy-of-the-slovak-republic.pdf.
[17] Ibid., p. 18.
[18] Rastislav Janota, 'Cybersecurity governance in Slovakia with focus on legislation and practical questions', online presentation, 22 November 2022, https://centreforpolicystudies.org/gallery/SK_cybersecurity_environment.pdf.
[19] Այցը տեղի էր ունեցել Եվրոպական Միության ֆինանսական օժանդակությամբ՝ Սևծովյան տարածաշրջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ փորձագետների շարժունակության հիմնադրամի շրջանակում: Հիմնադրամը տնօրինում է Ռումինիայի հասարակական կազմակերպությունների հանուն զարգացման ֆեդերացիան՝ որպես Սևծովյան տարածաշրջանի հասարակական կազմակերպությունների ֆորումի գլխավոր կոորդինատոր՝ ԵՄ-ի

Սլովակիայի միջազգային զարգացման գործակալությանը կարող է ներկայացվել համապատասխան ծրագրի նախագիծ:

Հակիրճ եզրակացություն

Մարդկային գործոնի՝ մասնավորապես տեղեկացվածության պակասի և անփութության հնարավոր վնասները հաշվի առնելիս, կարելի է նաև նշել. «Արդյունավետ տեղեկատվական անվտանգությունը միավորում է տեղեկատվությունը, ցանցերը և համակարգերը պաշտպանելուն նպատակաուղղված միջոցների մի քանի շերտ: Դրանցից մեկի անարդյունավետությունը հանգեցնում է նաև մյուսների անարդյունավետությանը: Կիբերանվտանգության տեսանկյունից երբեմն դիտարկվում են միայն տեխնիկական միջոցները՝ այդ թվում ծրագրային ապահովման լրացումները, ներխուժման հայտնաբերման համակարգերը, հակավիրուսային ծրագրերը և գաղտնագրումը: Սակայն հաջողված կիբերհարձակումներն առավել հաճախ ոչ թե տեխնիկական բնույթ ունեն, այլ անհատական մակարդակում են: Կիբերանվտանգության առումով առավելագույն խոցելիությունը մարդկային գործոնի հետևանք է»:[20] Իսկ, օրինակ, IBM ընկերության «Cyber Security Intelligence»-ի 2014 թ. գնահատմամբ կիբերանվտանգության հետ կապված պատահարների 95% դեպքերում առկա էին որոշակի մարդկանց կողմից կատարված սխալներ»:[21]

Բացի այդ, պետք է նաև հաշվի առնել, որ ոչ ժողովրդավարական պետությունները և մրցակցային ավտորիտար պետությունները օգտագործում են կիբերանվտանգության խնդիրը, և մասնավորապես «առցանց ինքնիխանությունը», որպես պատրվակ՝ իրենց քաղաքացիներին ճնշելու համար՝ նրանց արտաքին ազդեցությունից և սպառնալիքներից իրապես պաշտպանելու փոխարեն: Դա բնակչությանը վերահսկելու հարմար գործիք է՝ լինի դա «սոցիալական ռեյտինգի» համակարգի թե հոգեբանական մշակման լայնածավալ գործողությունների միջոցով: Այսպիսով, ժողովրդավարական պետությունների համար առկա է կրկնակի մարտահրավեր. նրանք պետք է ապահովեն իրենց կիբերտիրույթների պաշտպանությունը՝ միևնույն ժամանակ երաշխավորելով, որ չեն չարաշահի տեխնիկական միջոցները: Քաղաքացիներին պետք է երաշխավորվի, որ պաշտպանական միջոցները չեն օգտագործվի համատարած հետախուզության նպատակով: Այսպես՝ «Եվրոպացիների՝ մասնավորապես Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի բնակիչների 20-րդ դարում ունեցած ամբողջատիրության փորձը հուշում է, որ անհատների իրավունքները պետք է երաշխավորվեն կիբերանվտանգության թե՛ ներպետական, թե՛ միջազգային համակարգերում՝ դրանց կարողությունների աճին զուգահեռ: Ժամանակը չափազանց թանկ է, քանի որ հենց այդ գործընթացներն իրարից առանձնանան և երաշխիքները մղվեն հետին պլան, համակարգը չարաշահելու գայթակղությունը

ֆինանսավորմամբ 2022 թ. հունվարից մինչև 2023 թ. փետրվար իրականացվող «Քաղաքացիական հասարակության հնարավորությունների ընդլայնում՝ հանուն սևծովյան տարածաշրջանում համագործակցության» նախագծի շրջանակում:

[20] Elisa Norvanto, 'The human layer of cybersecurity – the art of social engineering' (quoted from Ugo Emekauwa, 'The human layer of information security defense', 2007), in: *Handbook on Cybersecurity: The common security and defence policy of the European Union*, Vol. V, 2nd edition, 2018, p. 192.

[21] Norvanto, op. cit. (quoted from Fran Howarth, 'The role of human error in successful security attacks', SecurityIntelligence.com, 2014).

կավելանա ցանկացած պետության, քաղաքական գործչի կամ կուսակցության համար»:[22]

Սրա առնչությամբ կարելի է վերհիշել մի դեպք, երբ լրատվական հետաքննությունը նպաստեց Հայաստանում համատարած հետախուզության համակարգի ներդրման փորձի կասեցմանը: 2019-ին «Eurasianet» պարբերականի հրապարակման մեջ բացահայտվել էր, որ դեռևս 2011 թ. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոնին» հանձնարարվել էր ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության հետ համատեղ մշակել «Անվտանգ քաղաք» հայեցակարգը, որի շրջանակում կարող էր ներդրվել նաև արհեստական բանականության միջոցով մարդկանց դեմքերի տարբերակման համակարգ: 2017 թ. սկսվել էին բանակցությունները չինական «Huawei» ընկերության հետ, որոնք հրապարակման պահին դեռևս շարունակվում էին: Հրապարակումից որոշ ժամանակ անց Երևանի քաղաքապետարանից հայտնեցին, որ բանակցությունները դադարեցվել են: Սրան ժամանակին անդրադարձել էր նաև «Ֆրիդոմ Հաուզ» կազմակերպությունը՝ «Freedom on the Net 2020» զեկույցում:[23] Այսպիսով, հարկ է կրկին շեշտել, որ հանրային քննարկումները և որոշումների կայացման թափանցիկությունը ժողովրդավարության կարևորագույն տարրեր են, քանի որ ժողովրդավարությունը չի սահմանափակվում պարբերաբար անցկացվող ընտրություններով:

Հաշվի առնելով կիբերանվտանգությանն առնչվող խնդիրների բարդությունն ու փոխկապակցվածությունը, անհրաժեշտ է կազմակերպել պետական և մասնավոր հատվածների, կրթական և գիտական հաստատությունների միջև՝ ներառելով նաև անհատ օգտատերերին: Սա նախ և առաջ պետք է կատարվի ներպետական մակարդակով՝ միաժամանակ նաև ուսումնասիրելով միջազգային համագործակցության հնարավորությունները:

Սլովակիայի հետ համագործակցության վերը նշված գործնական հնարավորությունից բացի, առկա են թե՛ Վիշեգրադյան քառյակի այլ երկրների հետ երկկողմանի, թե՛ այդ ձևաչափով բազմակողմանի համագործակցության զարգացման հնարավորություններ՝ պետական կառույցների փորձագետների վերապատրաստման և այլ ոլորտներում. սրա վերաբերյալ կարող են կազմակերպվել լրացուցիչ խորհրդակցություններ՝ գործնական իրականացման նպատակով:

Կարճաժամկետ առումով նպատակահարմար է նաև ներդնել Չեխիայի ազգային անվտանգության աուդիտում նշված որոշ միջոցներ՝ պետական կառավարման բոլոր մակարդակներում աշխատակիցների ուսուցումը կիբերանվտանգության և «թվային հիգիենայի» վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների և կիբերանվտագության փորձագետների համար կենտրոնացված ուսումնական հաստատության ստեղծումը:

[22] Feledy, op. cit.
